

ՀԱՅԵՐԸ ԴՐՄՈՒՄ

# ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ



Տարիներ առաջ՝ հայի բախտով ու ճակատագրով, Մամվել Ջաքարյանն էլ հայտնվեց օտարության մեջ: Երևանում ծնված ու կրթություն ստացած երիտասարդն ուներ իր նախընտրած մասնագիտությունն ու արվեստի իր աշխարհը թատրոնը:

Մակայն օտարությունն ինքը մի փորձաքար է բժշկի, ուսուցչի, գիտնականի, դերասանի համար: Այստեղ դու չես թելադրում, քեզ թելադրում են... պատեպատես խփվում այնքան, մինչև կարողանաս ինքնահաստատվել...

Անիմաստ ու անարդյունք փնտրողները շարունակվեցին: Մամվել Ջաքարյանը բազմաթիվ փորձեր արեց Դոնի հայ համայնքում կազմակերպելու, բեմադրելու հայերեն լեզվով ներկայացումներ: Արդյունքները ոգևորող չէին: Ամեն անգամ մի բան խանգարում էր. չկային ֆինանսներ, դերասաններ, շենքային պայմաններ և այլն: Նա երբեմն հույսը կորցնում էր ու սկսում ուրիշ աշխատանք փնտրել, բայց սերը բեմի և թատրոնի հանդեպ նրան չէր լքում:

«Վերջապես հայ շնորհալի երիտասարդների մի խմբի հետ (Վահե Տիգրանյան, Մարիամ Եփրեմյան, Մաթենիկ Մինասյան) սկսեց տիկնիկային թատրոնի փորձերը Հովհաննես Թումանյանի «Անհաղթ արքայի» հեքիաթի մոտիվներով:



Շատ խոչընդոտներ հաղթահարելուց հետո (սկսած դահիճից, ֆինանսներից, դեկորացիաներից մինչև դերասաններին

հայերեն խոսել ու արտասանել սովորեցնելը) վերջապես բացվեցին վարագույնները փոքրիկ հանդիսատեսի առջև: Ռոստովում կայացավ մայրենի լեզվով առաջին տիկնիկային ներկայացման ա-

ռաջնախաղը: Հայ մանուկները հնարավորություն ունեցան բեմից տեսնել հայերեն խոսող տիկնիկներին, լսել Թումանյանի չքնաղ լեզուն, համոզվել, որ չարը միշտ պատժվում է, թեկուզ թագավորը ազահ ու անկուշտ:

Դերասանների գեղեցիկ խաղը, գունեղ ու վառ տիկնիկներն ու հագուստները դեռ երկար կհիշվեն հայ մանուկների երևակայության մեջ:

Վստահ եմ, որ Մամվել Ջաքարյանի դեկավարությամբ շուտով ներկա կգտնվենք ավելի մարդաշատ ու հարմարավետ դահլիճներում նորանոր ներկայացումների առաջնախաղերի ու խաղերի:

Հաջողություններ մաղթելով հայ տիկնիկային թատրոնի նորաստեղծ դերասանական խմբին և թեմիսոր-բեմադրիչ Մամվել Ջաքարյանին՝ ցանկանալով նրանց նոր բեմեր, ստեղծագործական նոր նվաճումներ հայտնաբերելու ու մշակույթը պահպանելու և տարածելու նվիրական գործում:

Լիլիթ ԹԵՎՈՅԱՆ

ԳՐԱՆՈՍԱԿԱՆ

# ՎԱՅՐԻ ԾԱՂԿԻ ԲՈՒՅՐԸ



Իմ սեղանին է Սոնա Կարապետյանի «Վայրի ծաղիկ» բանաստեղծությունների ժողովածուն:

«Վայրի ծաղիկ»-ը սիրուն, բնությանը, հայրենիքին և նրա մարդկանց նվիրված բանաստեղծական խոհեր են: Խոհեր, ապրումներ, որոնցով հեղինակն իր հետ ապրեցնում է ընթերցողին այն բոլոր հույզերով ու զգացումներով, որոնցով ինքը հեղինակն է ապրում ու հուզվում:

Սոնան իր ստեղծագործություններով, դժբախտությունների մեջ շուրջված այս երկրային կյանքում, որոնում է իր անձնական երջանկությունը:

Եվ մարդկանցից ո՞վ է, որ այդ երջանկությունը չի որոնում: Որոնում են բոլորը. ոմանք առօրյա աշխատանքով, ոմանք գիտության կամ տեխնիկայի մեջ, ոմանք իմացաբանության և այլուր: Սոնան իր անձնական երջանկությունը որոնում է բանաստեղծական ինքնայրույնով: Եվ այդ այրումն հետևանքով առաջացած լույսով ու ջերմությամբ լուսավորում ու ջերմացնում է ընթերցողին ասես նրան հուշելով դեպի լույսն ու արևը տանող ուղին:

Ընդհանրապես գրականության նպատակը գոյություն ունեցող աշխարհի կողքին մի նոր, ավելի մարդկային աշխարհի ստեղծումն է, և Սոնան կարողացել է ստեղծել իր այդ փոքրիկ, բայց գեղեցիկ ու մաքուր աշխարհը: Նա կյանքը տեսնում է այնպես, ինչպես կատեղծեր ինքը, էթե Աստված լիներ:

Նա համոզված է, որ մարդն առանց պոեզիայի չի կարող լիարժեք ապրել:

Կարդալով «Վայրի ծաղիկ»-ը, ընթերցողի մոտ անմիջապես ծագում է այն միտքը, որ Սոնան առաջին հերթին սիրերգակ բանաստեղծ է:


Հայ գրականության մեջ շատ են սիրերգակները, բայց այդ հավերժական ու ամենամարդկային թեմայի մեջ Սոնայի սիրերգությունը մի առանձին հմայք ու խորություն ունի: Այստեղ համարյա թե չկան սիրո տառապանքներ, անհուսալի իրավիճակներ: Սոնայի մոտ սերն ասես ներփակված լինի հենց իր մեջ:

Եվ էթե կուզեք իմանալ, իսկական սերը հենց այդ մարդու ներսում եղած սերն է, որը ցուցադրական չէ, այլ անբջական և հեռու արտաքին աշխարհից, մարդ-տիեզերքի անսահմանության մեջ:

Հեղինակը, հիացած ու զարմացած հանկարծապես հասունացումով, հարցնում է. «Այդ է քո ծաղկեցիկ...»: Բանաստեղծությունը կոչվում է «Կամիտասական», բայց ընթերցողն անմիջապես ճանաչում է «Սոնա յար...» Սոնային:

Վաղը գայու է սիրո, արբունքի, գարթոնքի ժամանակը և հեղինակը հմայված իր սիրով, առասպելական Դանայայի նման, սայասում է ոսկե անձրևի: Թող որ այն լինի «Բեկված դաշտի սիրտի թափվող կայծակներից»: Ջելինկին ասում էր. «Արվեստից հավերժությունը մնում է միայն փոխաբերությունը»: Բազմաթիվ ու բազմաբնույթ են Սոնայի գտած փոխաբերությունները:

Բերենք միայն մեկ օրինակ: Սոնան սերը համարում է հին գինի: Ինչպես գիտենք, գինին որքան հնանում, այնքան թրեղանում է: Եվ իսկական սերն



է որքան հնանում, այնքան արբեցուցիչ ու դյուրիշ է դառնում:

Ճիշտը խնձորը երկուսով ուտելն է, եզրակացնում է հեղինակը, այսինքն կյանքի հավերժության գրավականը սերն է:

Մարդկային հոգու բարձրագույն բաղձանքն է սիրել և սիրված լինել:

«Երանի քեզ, իմ սեր, Որ սիրված ես այսքան...»:

Երանություն է, երբ մարդը սիրված է և առավել քան երանելի է, երբ մարդ ինքն է սիրում և այդ սիրո շնորհիվ քանդում, ավերում է բոլոր սահմանները, բոլոր խոչընդոտներն ու, թեկուզ մոտովի, վայելում է «Բացված ծիածանների գեղեցկությունը»:

Հեղինակը ճշում է առաջին սիրո հեռավոր հուշերի ցավից, որպեսզի կանգ-

Մամվել Ջաքարյանը ծնվել է մեծազգե և բնության հրաշալի անկյուններից մեկում՝ Խաչիկ գյուղում, ուր հրաշագեղ տեսարաններից զատ լեռներում են բազմապիսի վայրի ծաղիկներ հրաշք գեղեցկությամբ և անուշաբույր հոտավետությամբ: Սոնայի բանաստեղծություններից ընթերցողը ըմբռնվում է այդ ծաղիկներ բույրը:

Սոնա Կարապետյանը ծնվել է մեծազգե և բնության հրաշալի անկյուններից մեկում՝ Խաչիկ գյուղում, ուր հրաշագեղ տեսարաններից զատ լեռներում են բազմապիսի վայրի ծաղիկներ հրաշք գեղեցկությամբ և անուշաբույր հոտավետությամբ: Սոնայի բանաստեղծություններից ընթերցողը ըմբռնվում է այդ ծաղիկներ բույրը:

Ասում ԱՎԵՏԻՍՅԱՆ, արձակագիր, բանաստեղծ

ԼԻԼԻԹԻՍ

Դու կրունկի պես մի օր կչվես, Եվ ես կկորցնեմ հետքը երկնքում, Վայրի ծաղիկ պես լուռ կարտասպել, Ես դա կիմանամ յոթերորդ քիմրով:

Արևոտ օրեր կունենաս, անշուշտ, Իմ վայրի ծաղիկ՝ ավվան, բուրավետ, Ուրիշի գրկում դու փունջ կդառնաս, Ինձ համար, սակայն, մինունձար հավետ:

Եվ ամեն գարնան քո փոքրիկ շնչով Սրտիս հոգնությունը քողը կվերցնես, Որպես ձնծաղիկ գարուն ավետող Աշնան մշուշից ինձ ես կկանչես:

Եվ սպաներս ետ կպտտվեն, Թներն արձակած, քե՛զ գրկելու, Միայն քե՛զ, ըմբո ստ իմ վայրի ծաղիկ, Գալիք հողմերից կրկին փրկելու:

ՍՇՈՆ

Այնպես անհոգի եկավ աշունս՝ Ներկայանակով իր ցուրտ գույների, Չեմ ուզում նրա առատ սեղանը, Ես դեռ կուշանամ, նա թող ինձ ների:

Ների՛ր, ի՛մ աշուն, հոգնա՛ծ իմ տարիք, Ես մնացել եմ եզերքում գարնան, Դու շարունակիր երգդ խարոսիկ, Թող քո խնջույքում ինձ մոռանան...

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

